

**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2016-17 ուստարվա ամփոփիչ ատեստավորման  
հանձնաժողովների կարծիքների վերլուծություն**

**30.06.2017թ.**

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից վերջին տարիներին անցկացվող պարբերական ու բազմաբնույթ հարցումների մեջ ուրույն տեղ ունի Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների հավաքագրումը հատուկ հաշվետվության ձևաթղթի միջոցով, որտեղ ամրագրվում են նրանց հավաքական կարծիքները շրջանավարտների մասնագիտական գիտելիքների, գործնական հմտությունների, միջնորդավորված կերպով նաև անձնական նկարագրի մասին: Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության որակա-քանակական այն գնահատականները, որոնք տրվում են ատեստավորման հանձնաժողովների կողմից, տվյալ բուհի գործունեության արդյունավետության առանցքային բաղադրիչներից մեկն է /եթե ոչ ավելին/: Քանզի այդ գնահատականները յուրովի արժևորում են բուհի ղեկավարության, սպասարկող ողջ անձնակազմի գործունեությունը, ֆակուլտետների ու մասնագիտական ամբիոնների կառավարչա-կազմակերպչական ջանքերը ուսումնառության չորս տարիների ընթացքում, դասավանդող դասախոսների գործադրած ջանքերի «պտուղները», մի բան, ինչը նաև նրանց մասնագիտական, մանկավարժական և անձնային որակների միջնորդավորված գնահատականն է: Դրանք հիմք են նաև ապագա գործատուների համար, որոնց ներկայացուցիչները շատ ղեպքերում ընդգրկված են նաև համապատասխան հանձնաժողովների կազմերում և որոնք իրենց պահանջներն ունեն շուկայական տնտեսության ու կրթական համակարգի զարգացումների ներկա հայաստանյան պայմաններում: Հերթական անգամ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից հանձնաժողովներին ներկայացվել է հարցաշարեր, որտեղ գնահատվել են շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքները, ավարտական աշխատանքների թեմաների համապատասխանությունը որակավորմանը և շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները գնահատել են.

1. մասնագիտական գիտելիքների և պատկերացումների իմացությունը և ըմբռնման մակարդակը;
2. ձեռք բերված գիտելիքների և պատկերացումների կիրառման կարողությունների մակարդակը;
3. իրենց մասնագիտության շրջանակներում դատողություններ անելու կարողությունների մակարդակը;
4. հաղորդակցման կարողությունների առկայությունն ու մակարդակը;
5. ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը:

Ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովը գնահատել է.

**ա/** թեմատիկայի համապատասխանությունը որակավորմանը;

**բ/** ավարտական աշխատանքների տրամաբանական կառուցվածքը;

**գ/** յուրօրինակ լուծումների, նորարարական տարրերի, վերհանված խնդիրների համակողմանի ուսումնասիրման և վերլուծության առկայությունը;

դ/ փորձնականորեն ստացված կամ ուսումնասիրված տվյալների հանրագումարային ներկայացման, սեփական տեսակետների վստահ պաշտպանության կարողությունների մակարդակը;

ե/ մասնագիտական գրականությունից օգտվելու և համադրելու կարողությունները;

զ/ աշխատանքի ներկայացման մակարդակը և մասնագիտորեն գրագետ բանավոր խոսքը:

Ներկայացնենք հանձնաժողովների ընդհանրական գնահատականներն ու առաջարկները մասնաձյուղի կտրվածքով: Առկա ուսուցման մասնագիտությունների հանձնաժողովներն ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքներից ստացած տպավորությունները, որակական գնահատականները ձևակերպել են յուրովի (բարձր, գերազանց, լավ, համապատասխանում են չափորոշիչներին և այլն), սակայն դրանք հատվում են մի կետում, այն է՝ ԵՊՀ ԻՄ-ի 2016-17 ուստարվա շրջանավարտները, ինչպես ամրագրվել է նաև նախորդ տարվա հարցումներում, եզակի բացառությունով, ըստ էության, ունեն մասնագիտական գիտելիքների իմացության և ըմբռնման պատշաճ մակարդակ, դրանք կիրառելու անհրաժեշտ կարողություն, կրթական և մասնագիտական միջավայրում գրագետ դատողություններ անելու հմտություններ: Նրանք ազատորեն կարողանում են հայտնել ու քննարկել իրենց կարծիքը, հիմնականում ազատորեն հաղորդակցվում են հանձնաժողովի անդամների հետ, ներկայացնում լսարանից դուրս ստացած տեղեկությունները: Կրթական ներկա զարգացումներում թերևս ավելի է, քան նախորդ կրթական համակարգում կարևորվում է ինքնակրթության մակարդակը, որը նույնպես հանձնաժողովների կողմից արժանացել է պատշաճ դրական գնահատականի:

Այս կարգի գնահատականներում միակ բացառությունը «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից գիտելիքների կիրառման շրջանավարտների կարողության մակարդակի գնահատականն էր: Այստեղ հանձնաժողովի կողմից նշվել է, որ ի տարբերություն գործնական ֆրանսերենի, տեսական առարկաների ներկայացումը երբեմն **կաղում** էր: Երբ նայում ենք գնահատականներին, տեսնում ենք, որ տվյալ մասնագիտության 10-ը շրջանավարտից 4-ը ստացել են «գերազանց», 4-ը՝ «լավ», 2-ը՝ «բավարար»: Իսկ ահա «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 18 շրջանավարտից «լավ» են գնահատվել 12-ը, «բավարար»՝ 5-ը, և, «Մանկավարժություն և հոգեբանություն»-ից, որտեղ շրջանավարտների թիվը 19 է, «լավ» են գնահատվել 11-ը, «բավարար»՝ 4-ը, «Տնտեսագիտական տեսություն»-ում 21 շրջանավարտից «լավ»՝ 13-ը, «բավարար»՝ 5-ը, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»-յում 21-ից՝ «լավ»՝ 4-ը, «բավարար»՝ 8-ը: Այսինքն համադրումը վկայում է, որ այդ հանձնաժողովներն ամփոփիչ գնահատականներում այդ աստիճան թերևս չեն կարևորել տեսական գիտելիքների կիրառման կարողությունը, որքան ՖԼԳ-ում, որովհետև համամասնության տեսանկյունից մյուս հանձնաժողովների գնահատականները ՖԼԳ-ի համեմատ ավելի ցածր են, մինչդեռ այստեղ շրջանավարտի տվյալ որակի հանդեպ «դժգոհություն» չի եղել: Սա վերլուծական հետևություն է, որն ունի ընդամենը վարկածային հնարավոր արժեք և մեր կողմից չի բացարձակացվում: Այն, որպես մասնագիտական հնարավոր հետևություններից մեկը, ընդամենը հուշում է, որ նման դիտարկումը կարող է հիմք դառնալ հանձնաժողով-ամբիոն-ֆակուլտետ քննարկումներում, կապված ամփոփիչ ատեստավորման գնահատականների բաղադրիչների հիմնավորման հետ:

Նմանօրինակ դիտարկում մենք կատարել էինք նաև նախորդ տարվա հարցումներից, կապված հատկապես հեռակա ուսուցման շրջանավարտների հաղորդակցական կաշկանդվածության և դժվարությունների հետ: Դա նուրբ մարդկային հարաբերությունների խնդիր է, որի հանդեպ հապշտապ հետևությունները միայն ընդհանուր գործին կվնասեն: Քանզի մի դեպքում այն կարող է առնչվել հանձնաժողովի ստեղծած մթնոլորտի, երկրորդում՝ տարածաշրջանային բնավորության որակների, երրորդում՝ ուսուցման ոլորտում առկա բացթողումների, չորրորդում իրենց իսկ՝ շրջանավարտների ուսումնական բացթողումների հետ և՝ այլն:

Արդեն վերջին տասնամյակի համար գրեթե ավանդական դարձած բարձր էին նաև ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովների ստացած տպավորությունները: Նորից տարբեր, երբեմնի ինքնատիպ ձևակերպումներով, հանձնաժողովների անունից նախագահները գրեթե միակարծիք են այն համոզումներում, թե ԵՊՀ ԻՄ-ի 2016-17 ուստարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների թեմատիկան համապատասխանում է մասնագիտության առաջադրվող պահանջներին, բովանդակությունը հիմնականում (մեծ մասամբ) ուներ տրամաբանական կառուցվածք (գլուխների միջև առկա էր փոխկապվածություն), համապատասխանում էր ներկայացված պահանջներին: Շատ աշխատանքներ նորարարական էին, նրանց մի մասում առկա էր, օրինակ՝ լեզվաբանական խնդիրների նորովի, տարբեր կողմերից հետազոտումը: Շրջանավարտների մեծ մասը տիրապետում էր ներկայացված ու վերլուծված նյութի շուրջ դատողություններ անելու հմտություններին, միջինից բարձր, լավ էր սեփական տեսակետները վստահաբար պաշտպանելու կարողությունների մակարդակը: Պատշաճ բարձրության վրա էին մասնագիտական գրականությունից օգտվելու և համադրելու կարողությունները, բանավոր խոսքի գրագիտության աստիճանը: Միաժամանակ ընթացիկ տարում հանձնաժողովներն ավելի ընդգծված են անդրադարձել նկատված որոշ թերություններին, որոնք կապված են տարբեր մասնագիտությունների ավարտական աշխատանքների պաշտպանության հետ: Այսպես, օրինակ, Հայոց լեզվի ու գրականության հանձնաժողովն ավարտական որոշ աշխատանքներում «նկատել» է զգայության տարրեր, **նորարարական տարրերը այստեղ չեն կարևորվել**, մյուս կողմից **առաջ չեն քաշվել սեփական տեսակետներ**: Պատմության հանձնաժողովը շրջանավարտներից որոշի մոտ «ամրագրել» է *թերացումներ՝ ինքնուրույն վերլուծություններում և բանավոր խոսքում*:

Հատկանշական և, թերևս, ավելորդ չէ ընդգծել, որ երբ որակական այս ձևակերպումները համադրում ենք ամփոփիչ քննության ու ավարտական աշխատանքների ընդհանրական քանակական գնահատականների հետ, համոզվում ենք, որ շրջանավարտների, որպես բարձրագույն կրթություն ունեցող անձանց հատկանիշների ընկալումը հանձնաժողովների կողմից ոչ միայն խզում չունի, այլև վիճակագրորեն լիովին համապատասխանում է այդ տպավորություններին: Այսպես, առկա ուսուցման բաժնի ամփոփիչ քննություն հանձնած **164** ուսանողից՝ **127-ը (77,5%)** և ավարտական աշխատանքի պաշտպանությունից **153-ը (93,0%)** ստացել են **գերազանց և լավ գնահատականներ**: Երբ դիտարկում ենք առանձին մասնագիտությունների տվյալները, այստեղ ևս նկատելի է սուբյեկտիվ տպավորությունների և գնահատականների որոշակի ներդաշնակ համամասնությունը: Թե՛ ամփոփիչ ատեստավորման քննությունից, և թե՛ ավարտական աշխատանքի պաշտպանությունից բացակայում է «անբավարար» գնահատականը: «Բավարար» են գնահատվել ամփոփիչ ատեստավորման քննությունը

հանձնած **37 (22,5%)** և ավարտական աշխատանքը պաշտպանած **11 (7,0%)** շրջանավարտ: Այսինքն, ընթացիկ տարում չի եղել «Ոչինչ չի մացող ու չկարողացող» շրջանավարտ և, համեմատաբար չափազանց քիչ են՝ «քիչ բան իմացողները», շատ ավելի քիչ «ոչինչ չկարողացողները» (**11-ը՝ 164-ից**): Ի լրումն նշենք նաև, որ «բավարար» գնահատականներ չեն եղել «Կիրառական արվեստի», «Հայոց լեզվի և գրականության», «Մանկավարժության և հոգեբանության», «Ֆրանսերեն լեզվի և գրականության» ավարտական աշխատանքների պաշտպանություններում: «Սերվիս» մասնագիտության 14 շրջանավարտից միայն մեկն է ամփոփիչ ատեստավորման քննությունից գնահատվել «բավարար»:

Համառոտակի անդրադառնանք նաև հանձնաժողովների առաջարկներին: Չուտ որոշակի մասնագիտությանը վերաբերող առաջարկները բերված են համապատասխան հանձնաժողովի հաշվետվության մեջ: Ներկայացվում են ենթադրաբար այն առաջարկությունները, որոնք կարող են ունենալ նաև ընդհանուր նշանակություն և յուրովի կրկնվում են տարբեր հաշվետվություններում:

Ինչպես նախորդ տարի, ընթացիկ ուսումնական տարվա առաջարկներում նույնպես անդրադարձ է եղել հարցաշարերին: Այստեղ ցանկալի են համարել, որպեսզի.

ա/ հարցաշարերը կատարելագործվեն՝ հաշվի առնելով ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ նախատեսվող փոփոխությունները;

բ/ փոփոխության ենթարկել որոշ տեսական առարկաների հարցաշարը (ոճաբանություն և տեսական հնչյունաբանություն)՝ համապատասխանեցնելու բակալավրիատի ուսանողներին առաջադրվող պահանջներին:

Նորից մի շարք հանձնաժողովներ շեշտադրում են տեսական գիտելիքների գործնական կիրառման կարողության կարևորությունը, սույն հարցում որոշ շրջանավարտների թերացումները.

- «Կիրառական արվեստ» մասնագիտության հանձնաժողովը «ցանկանում» է, որ էսքիզներն ու մտահղացումները լինեն ուսանողներին, իրենք տեսնեն բնօրինակներ, որքան այն հնարավոր է;

- Տնտեսագետները ցանկանում են, որ ուսանողներն ինքնուրույն կարողանան վերլուծել ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերը,

- Պատմաբաններն իրավամբ առանցքային են համարում ապագա պատմաբանի անհատականության խնդիրը, պատմական իրողության (փաստի) մեջ մեր ժողովրդի համար դրա կարևորության «չափը» տեսնելու նրանց ունակությունը:

Ավարտական աշխատանքների վերաբերյալ առաջարկություններում «ցանկալի», «օգտակար» և «պարտադիր» են համարվել.

- թե՛ աշխատանքի պատրաստման, և թե՛ ներկայացման ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների առավել արդյունավետ կիրառման և ինովացիոն մոտեցումների ներդրման ապահովումը;
- ղեկավարների, թեմաների ընտրության ու գրախոսման հարցերում ավելի շահախնդիր ու գործուն ուշադրությունը;
- թեմաների ընտրության մեջ տարածաշրջանային հիմնախնդիրների բացահայտմանը և լուծմանը նվիրված հարցերի առաջնայնությունը,

- 4-րդ կուրսեցիներին հետազոտական և վերլուծական աշխատանք կատարելու իմացություն ու հմտություն սովորեցնող ժամերի ներմուծման հնարավորության որոնումը:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ԵՊՀ ԻՄ–ի 2016-2017 ուստարվա ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովների գնահատմամբ, մասնաճյուղի առկա ուսուցման բաժնի շրջանավարտները պատշաճ մակարդակով տիրապետում են այն մասնագիտական գիտելիքներին և հմտություններին, որոնք դրված են բակալավրական կրթության առջև:

Մասնաճյուղում ուսումնառության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված առաջարկներում էական են համարվել հարցաշարերի և ավարտական աշխատանքների թեմատիկայի պարբերական արդիականացումը, տարածաշրջանային հիմնախնդիրների թեմատիկային հարաճուն ուշադրությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների ավելի համարժեք օգտագործումը, երիտասարդ մասնագետի անհատականության, բարոյա-աշխարհայացքային հարցերին ավելի գործնական ուշադրությունը:

Առանձին մասնագիտություններին վերաբերող դիտողությունների ու առաջարկությունների կողքին, այս ամենը կարող են հիմք հանդիսանալ ուսումնառության կազմակերպման տարբեր մակարդակի շահախնդիր կողմերի հետ քննարկելու և ընթացիկ ուսումնական տարվա աշխատանքները բարելավելուն ուղղված կոնկրետ միջոցառումներ մշակելու համար:

***Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին***